

**ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՕՐԸ ՎԷՆ ՆԱՅՍԻ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ
ՊԱՏԱՐԱԳԵՑ ԵՒ ՔԱՐՈՉԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ**

Ծաղկազարդի օրը՝ Կիրակի, Մարտ 28ին հոգեկան ցնծութեան ջերմ մթնոլորտ մը ստեղծուած էր Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ: Սուրբ Պատարագը մատոյց եւ օրուան Խորհուրդին շուրջ քարոզեց Առաջնորդ Սրբազան Հայրը եւ իր խօսքին մէջ ներկայացուց Գոնկրէս-մէն Պրէտ Շըրմընը, որ յատուկ ջանք կը թափէ Հայոց Ցեղասպանութեան պաշտօնապէս ճանաչման համար:

Սուրբ Պատարագի աւարտին կատարուեցաւ Դռնբացէքի արարողութիւն: Օրուան արարողութիւններուն մասնակցեցան Ծուխին Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Շնորհք Աւագ Քինյ. Տէմիրճեան, Արժ. Տ. Զաւէն Աւագ Քինյ. Տէմիրճեան, Սարկաւազներն ու Դպրաց Դասը:

**ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ 7ՐԴ ՏԱՐԵԴԱՐՉ
ԿԼԷՆՏԵՅԼԻ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ**

Ծաղկազարդի օրը Կլէնտէյլի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ Սուրբ Պատարագ մատոյց Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Վազգէն Քինյ. Մովսէսեան: Իսկ արարողութեանց հանդիսապետեց եւ օրուան Խորհուրդին մասին քարոզեց Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան:

Սուրբ Պատարագի աւարտին կատարուեցաւ Դռնբացէքի արարողութիւն: Ապա Թալին Մեհրապեան Սրահին մէջ տօնախմբուեցաւ Եկեղեցւոյ 7րդ տարեդարձը, որուն առթիւ մեր շնորհաւորութիւնները կը յղենք Արժ. Տ. Վազգէն Քինյ. Մովսէսեանին, Ծխական Խորհուրդին, Տիկնանց Միութեան, յարակից կազմակերպութիւններուն եւ համայն հաւատացեալ ժողովուրդին:

ԾԱՂԿԱԶԱՐԴԸ ՊԸՐՊԵՆՔԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻԷՆ ՆԵՐՍ

Ծաղկազարդի օրը Պըրպէնքի Հայց. Եկեղեցւոյ մէջ, Առաջնորդարան, Սուրբ Պատարագ մատոյց Ծուխին Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Խաժակ Քինյ. Շահպազեան: Դպրաց Դասի երգեցողութիւնը կատարեց Եկեղեցւոյ եւ Խաչատուրեան Երգչախումբը՝ ղեկավարութեամբ Բրշ. Ստեփան Սրկ. Կեօզիւմեանի:

Հիւրաբար Թեմն այցելող Հայաստանի Գուգարաց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Եպս. Չուլճեան հանդիսապետեց Անդաստանի Արարողութեան: Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտներ եւ մեծ թիւով այլ փոքրիներ ներկայ էին պատարագին:

Օրուան քարոզը տուաւ Սրբազան Հայրը, անդրադառնալով Ծաղկազարդի օրը Հայաստանի մէջ կատարուած աւանդութիւններուն մասին եւ ծանրացաւ Ծաղկազարդի Խորհուրդին վրայ: Արարողութեան աւարտին, Սրբազան Հայրը գլխաւորեց Դռնբացէքի Արարողութիւնը:

**ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՕՐԸ ԳՈՒՓԸՐԹԻՆՈՅԻ ՍՈՒՐԲ ԱՆԴՐԷԱՍ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ
ՊԱՏԱՐԱԳԵՑ ԵՒ ՔԱՐՈՉԵՑ ԳԵՐՇ. Տ. ՏԱԹԵՒ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ**

Գերշ. Տ. Տաթեւ Արք. Սարգիսեան, որ Հայաստանէն ներս հոգեւոր ծառայութիւն կը մատուցանէ, որոշ ժամանակի մը համար վերադարձած է Գալիֆորնիա: Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի հրաւերով, բարձրաստիճան հիւր հոգեւորականը Ծաղկազարդի օրը Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց Սանթա Գլարա Հովիտի Սուրբ Անդրէաս Հայց. Եկեղեցւոյ մէջ: Սուրբ Սեղանին սպասարկեցին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Տաթեւ Քինյ. Յարութիւնեան եւ Սարկաւազները:

Արարողութեան աւարտին Եկեղեցւոյ Ամիրեան Սրահին մէջ հաւատացեալները պարզեւտրեցին Տէր Տաթեւին՝ կարկանդակով եւ նուէրներով, նշելով անոր տասը տարիներու որպէս Ծուխին Հոգեւոր Հովիւ իր մատուցած նուիրեալ ծառայութիւնները: Տէր Հայրը իր շնորհակալութիւնները յայտնեց եւ գնահատեց իր նկատմամբ բոլորին ունեցած սէրն ու յարգանքը:

**ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
ՎԵՆԹՈՒՐԱ ԳԱԻԱՌԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ**

Վենթուրա Գաւառի Դայց. Եկեղեցւոյ մէջ ընդհանրապէս ամսուան երկորդ եւ չորրորդ Կիրակի օրերը Սուրբ Պատարագ կը մատուցի այցելու Դոգետորականի մը կողմէ:

Սկստի ունենալով Ծաղկազարդն ու Սուրբ Զատիկը, Ծաղկազարդի օրը Վենթուրա Գաւառի Դայց. Եկեղեցւոյ մէջ կէսօրին Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Դոգ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան: Սուրբ Պատարագի աւրտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Սուրբ Զատիկի օրը նոյնպէս Դոգ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան պիտի Պատարագէ եւ քարոզէ: Յաւելեալ տեղեկութիւններու համար կրնաք կապ հաստատել Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Ատենապետ՝ Տիար Կրէկ Շմաւոնեանին հետ հեռաձայնելով (818) 458-9745 կամ իր ի-մէյլի միջոցաւ gshmay@yahoo.com

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՕՆԸ ԼԱ ԳԱՆԻԱՏԱՅԻ ԵՒ ՔՐԵՍԵՆԹԱ ԴՈՎԻՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Կիրակի, Մարտ 28-ին, 2010, Լա Գանիատայի եւ Քրէսէնթա Դիվիտի Դայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Սուրբ եւ անմահ Պատարագ: Պատարագեց եւ Ծաղկազարդի օրուան նուիրուած պատշաճ քարոզ տուաւ Ծուխին Դոգետոր Դովի՝ Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քինյ. Յակոբեան: Ծաղկազարդի Տօնին հերոսները եւ գլխաւոր փայլ տուողները հանդիսացան Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտները՝ գլխաւորութեամբ Տնօրէնուհի Օրիորդ Աղանի Աշրգեանի եւ ուսուցչուհիներու: Ապա Տէր Դայրը քարոզեց, որուն յաջորդեց Դռնբացէքի արարողութիւնը, որմէ ետք թափօր եւ անդաստան:

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԼԱ ՎՈՐՆԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Ծաղկազարդի օրը, կէսօրուան ժամը 12:00ին Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց Եկեղեցւոյ Դոգետոր Դովի՝ Արժ. Տ. Նարեկ Աւագ Քինյ. Մատարեան: Տէր Դայրը քարոզին մէջ իր շեշտը դրաւ Յիսուսի կողմէ կատարուած Տաճարի մաքրագործումին վրայ: Արդարեւ, Տաճարը մարդն է, իսկ վաճառականները մեր հոգիին վրայ ծանրացած մեղքը, որ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ վերցնելու, մաքրելու եւ սրբելու: Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտները կարդացին խոստովանանքը եւ հաւատացեալներ Սուրբ Դաղորդութիւն ստացան:

Արարողութեան աւարտին սրահին մէջ Տիկնանց Միութեան կողմէ սիրոյ ճաշ հրամցուեցաւ հաւատացեալներուն, որոնք գոհունակ սրտով բաժնուեցան Սուրբ Զատիկի Արարողութեանց ներկայ գտնուելու խոստումով:

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԼԵՆՏԵՅԼԻ ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Ծաղկազարդի օրը եկեղեցին լեցուած էր հաւատացեալներով, որոնք եկած էին նորոգելու եւ վերարթնցնելու իրենց հոգիներէն ներս մտային պատկերը՝ այն հիասքանչ յիշատակութեան օրերու, երբ մեր Տէրը Յիսուս Քրիստոս յաղթական մուտք գործեց Երուսաղէմ, ուր ծերեր եւ մանուկներ ձիթենիի եւ արմաւենիի ճիւղերով դիմաւորեցին իրենց սպասած Մեսիան:

Սուրբ Գեորգ Դայց. Եկեղեցի յաճախած մանուկները ձիթենիի ճիւղերը իրենց ձեռքերուն մէջ, թափօր կազմեցին եկեղեցւոյ շուրջը՝ ի յիշատակ այդ գեղեցիկ աւանդութեան: Դռնբացէքի արարողութենէն ետք, կատարուեցաւ մանուկներուն օրհնութիւնը: Օրուան Սուրբ Պատարագը մատոյց եւ քարոզեց Ծուխին Դոգետոր Դովի՝ Արժ. Տ. Մամբրէ Քինյ. Քեսապեան: Սուրբ Սեղանին սպասարկեցին Եկեղեցւոյ Սարկաւագները, իսկ երգեցողութիւնը կատարեց երգչախումբը:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԻՇԸՆ ԴԻԼՁԻ ԱՐԱՐԱՏ ՏԱՆ ՄԷՋ

Ծաղկազարդի առաւօտեան ժամը 10:00ին Միշըն Դիլզի մէջ գտնուող Արարատ Դայ Տարեցներու Տան մէջ Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց Արժ. Տ. Միփան Աւագ Քինյ. Մխսեան: Սուրբ Սեղանին սպասարկեց Բրշ. Ստեփան Սրկ. Յովակիմեան:

Սուրբ Ջատկի առաւօտեան ժամը 10:00 Արարատ Տան մէջ պիտի Պատարագէ եւ քարոզէ Արժ. Տ. Ջարեհ Քհնյ. Մանսուրեան: Սուրբ Սեղանին դարձեալ պիտի սպասարկէ Բրշ. Ստեփան Արկ. Յովակիմեան: